

ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԻԻ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հոդվածը ստացվել է՝ 07.04.2021, գրախոսվել է՝ 18.05.2021

Հարկերը վճարումներ են, որոնք պարտադիր կարգով վճարում են իրավական և ֆիզիկական անձինք, անհատները, ձեռնարկությունները, կազմակերպությունները և այլոք: Հարկերը հանդիսանում են հասարակության և պետության առջև ծառայած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ձևավորման հիմնական աղբյուր:

Պատմական զարգացման տարբեր ժամանակահատվածներում պետության դերը, նշանակությունը և գործառնությունները հասարակական զարգացմանը գուզընթաց ընդլայնվել են, ինչն անդրադարձել է նաև հարկ կատեգորիայի վրա:

Հարկերի տնտեսագիտական էությունը առաջին անգամ արձանագրել է Դ.Ռիկարդոն (1772-1823): Նրա կարծիքով հարկերը կազմում են պետության արտադրանքի և աշխատանքի այն մասը, որը պետության տրամադրության տակ է, դրանք միշտ վճարվում են կապիտալից կամ երկրի եկամուտներից:

Դասական տեսության հայեցակարգում հարկերը սկսեցին դիտվել որպես պետական քաղաքականության գործիք և պետական եկամուտները պայմանավորող միջոց: Դասական տնտեսագիտության տեսության զարգացումը կապված է տնտեսագետներ Ու.Պետտիի, Դ. Ռիկարդոյի, Ա. Սմիթի հետ:

Հարկերի մասին առաջին հետազոտություններից մեկը վերագրվում է անգլիացի տնտեսագետ Ու. Պետտիին: Հատկանշական է տնտեսագետի տեսակետը հարկատուի դժգոհությունից խուսափելու վերաբերյալ, որը ենթադրում է հարկերի համամասնական բաժանում բնակչության կտրվածքով՝ միասնական հարկի արդար գաղափար: Պետտին վստահեցնում էր, որ այդ պարագայում, որքան էլ որ մեծ լինի հարկի չափը, ոչ ոք դրա պատճառով չի զրկվի հարստությունից:

Ըստ Սմիթի 1776թ.-ին հրատարակված «Ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրություն» աշխատության, հարկերի գումարի չափերի, վճարման ժամկետների և եղանակների որոշման հարցում անհրաժեշտ է անկողմնակալ մոտեցում:

Ավելի ուշ, երբ փոխվեցին տնտեսագետների պատկերացումները հարկային հարաբերությունների մասին, առաջացավ նոր տեսություն, որը զարգացավ մի շարք տնտեսագետների՝ Ն. Կոնարի, Ջ. Միլի, Ս. Վիտտեր, Ի. Յանժի և այլոց կողմից: Տեսությունը տնտեսական հարաբերությունները դիտում էր միակողմանի ներդրում և երկրորդային էին դառնում առանձին անհատների շահերի ապահովումը: Մասնավորապես Յանժիլը պնդում էր, որ հարկը հանգանակություն է բնակչության կողմից պետությանը, որի համար բնակչությունը պետք է կրի օրենքով սահմանված պարտավորություն, իսկ պետությունը պետք է ծածկի

բնակչության կարիքների և հանրային բարիքների ապահովման համար կատարված ծախսերը: Իսկ Ջ. Միլը իր «Քաղաքատնտեսության հիմունքներ» գրքում հարկերը և պետական ծախսերը դիտարկում է փոխադարձ կապի և կապվածության տեսանկյունից: Առաջին անգամ խոսվում է չհարկվող նվազագույն եկամուտ հասկացության՝ հարկատուի գոյությունը պաշտպանելու համար անհրաժեշտ նվազագույն գումարի մասին:

19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում, պայմանավորված սահմանային օգտակարության մասին տեսությամբ, կարծիք կար, որ պետական ծառայությունների սահմանային օգտակարությունը պետք է համապատասխանի հարկերի սահմանային օգտակարությանը: Սակայն 20-րդ դարում պետության դերն էական մեծանում էր, որն արտացոլվում էր ՀՆԱ-ի կառուցվածքում պետական ծախսերի տեսակարար կշռի ավելացմամբ: 20-րդ դարի առաջին կեսին առաջ է քաշվում քեյնսյան հայեցակարգը, որին են վերագրվում տնտեսության պետական կարգավորման և դրա դերի կարևորության մասին արմատական փոփոխությունները: Քեյնսյան տեսության հիմքում ընկած էր արդյունավետ պահանջարկի և վճարունակության ընդլայնման գաղափարը, որը ենթադրում էր ցածր եկամուտների ազատում եկամտահարկից, իսկ միջին և բարձր եկամուտների դեպքում՝ պրոգրեսիվ անուղղակի հարկում:

Հարկման տեսության հետագա զարգացումը կապված է նեոդասական տեսության տնտեսագետների մոտեցումների հետ: Տեսության նշանավոր ներկայացուցիչներն են Ա. Մարշալը, Դ.Կլարկը, Ա.Պիգուն, Լ.Վալրասը, Վ. Պարրետոն, ովքեր գտնում էին, որ հասարակության ինչպես կոլեկտիվ, այնպես էլ անհատական պահանջմունքների աճին զուգահեռ առանցքային է պետության համակարգի գործառույթների սահմանումը: Տեսությունում հարկերի հավաքագրումը անհրաժեշտ է հանրային պահանջների բավարարման համար, այդպիսով նեոդասականները սահմանում էին պահանջմունք կատեգորիան:

1950-ական թթ.-ին առաջանում է մոնետարիզմի տեսությունը՝ շրջանառության մեջ գտնվող փողի քանակի կառավարման հարցում կառավարության դերի անհրաժեշտությունը, հիմք դառնալով մոնետարիզմի հարկային տեսության ձևավորմանը: Ըստ մոնիտարիստների, հարկերի միջոցով շրջանառությունից դուրս է բերվում ավելցուկային դրամական զանգվածը¹:

Մինչև 1970-ական թվականները շահութահարկի բարձր դրույքաչափերի կիրառմանը զուգահեռ տրամադրվում էին բազմատեսակ հարկային արտոնություններ՝ տնտեսությունում գերակա ճյուղերի զարգացման համար անհրաժեշտ նախադրյալներ և պայմաններ ստեղծելու, ապահովելու համար: Սակայն տնտեսական ճգնաժամային երևույթների հետևանքով քեյնսյան տեսության տնտեսական և իրավական հիմքերը թուլացան, և 1970-80-ականների զարգացած արևմտյան երկրներում ձևավորվեց հարկային հարաբերությունների նոր մոտեցում, որի

¹ Брисгалин А., Налоги и налоговое право, Москва 1997, с. 54.

հիման վրա կառուցվեցին կիրառական հարկային քաղաքականության հիմնադրույթները¹:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ հարկաբյուջետային քաղաքականությունը պետության տնտեսական նպատակներն իրագործելու անուղղակի մեթոդ է, որի հիմնական գործիքներից են հարկերի և դրանց դրույքաչափերի փոփոխությունները, նոր հարկատեսակների և այլ պարտադիր վճարների սահմանումը: Հարկերը, հանդիսանալով պետական բյուջեի հիմնական եկամուտներ, ժամանակի ընթացքում պետության դերի, նշանակության և հասարակական գործառնությունների զարգացմանը զուգահեռ ենթարկվում են փոփոխության:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում հարկը սահմանվում է որպես պետական և (կամ) հասարակական կարիքների բավարարման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց գումար, որը վճարվում է հարկ վճարողների կողմից՝ Օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում:²

1990-ական թվականների առաջին կեսին Հայաստանի Հանրապետությունը բնութագրվում է շուկայական տնտեսության և դրա ենթակառուցվածքների ձևավորման և զարգացման, մասնավոր ձեռնարկատիրության խթանման գործընթացներով, տնտեսության մեջ առկա խոր ճգնաժամային երևույթների՝ սղաճի և դրամի արժեզրկման չափազանց բարձր տեմպերի, գործազրկության մակարդակի աննախադեպ աճի, տնտեսական ոլորտներում սպեկուլատիվ գործարքների և գործառնությունների առկայության, երկարաժամկետ կապիտալ ներդրումների բացակայության և այլ բացասական երևույթների ուղեկցությամբ: Ուստի, քաղաքական և տնտեսական անկախությանը հաջորդած վերոնշյալ դժվարությունները հաղթահարելու և խնդիրները լուծելու համար, քաղաքականապես և տնտեսապես նորանկախ Հայաստանի Հանրապետությունը հարկադրված էր ունենալու սեփական անկախ հարկային համակարգ և հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրություն, քանի որ հարկային լծակները հանդիսանում են պետության կողմից պետության կարգավորման կարևոր միջոց և պետական եկամուտների հավաքագրման առանցքային գործիք:

1990-ականների երկրորդ կեսը նշանավորվում է հարկային օրենսդրության արմատական բարեփոխումներով՝ ուղղված գործող օրենքների կատարելագործմանը, և նոր վճարատեսակներ սահմանող ու հարկային հարաբերությունները կարգավորող նոր օրենքների ընդունմանը:

Ընդհանուր առմամբ, ինքնուրույն հարկային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է 1992թ.-ից սկսած: Այդ ժամանակահատվածում են ընդունվել շահութահարկի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի, եկամտահարկի, գույքահարկի և հողի հարկի մասին օրենքները:

¹ Макаркина, Н. Л. Налоговая нагрузка / Н.Л. Макаркина. – Москва: Юрайт, 2013. – 207 с.

² ՀՀ հարկային օրենսգրք, ՀՕ-165-Ն հոդված 4, 1-ին կետ www.arlis.am

1997թ.-ի ապրիլին ընդունվեց «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքը, որը նորովի սահմանեց հարկային համակարգի հիմնարար սկզբունքները, հատկապես հարկային մարմինների և հարկատուների հարաբերությունների կարգավորումը, հարկ վճարողների պարտականություններն ու իրավունքները, հարկային օրենսդրությունը խախտելու դեպքում պատասխանատվությունը: Նույն թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտավ «Ակցիզային հարկի մասին» օրենքը, որով սահմանվեց ակցիզային հարկի հարկման օբյեկտը, հարկ վճարողներին, հարկի դրույքաչափերը և հարկի բազան: Օրենքում հստակ սահմանվեց նաև հարկի հաշվարկման և վարկավորման կարգը:

Մեկ տարի անց՝ 1998թ.-ին, ուժի մեջ մտան «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ հունվարի 1-ից, և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը՝ փետրվարի 1-ից: Վերջինիս մասով վերապահվեցին որոշակի իրավունքներ՝ համայնքային ավագանու գույքահարկի գծով արտոնություններ տրամադրելու վերաբերյալ: 1997-2000-ական թվականներին ընդունվեցին և գործածության մեջ դրվեցին «Հարկերի մասին» և հիմնական հարկատեսակների մասին նոր օրենքներ, ինչպես նաև հարկման հատուկ ռեժիմներ սահմանող «Հաստատագրված վճարումների մասին» և «Պարզեցված վճարումների մասին» ՀՀ օրենքները: Ավելի ուշ՝ 2000թ.-ից սկսած, ուժի մեջ մտան հարկային վարչարարության ոլորտը կարգավորող մի շարք օրենքներ, այդ թվում «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» և «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքները:

Ամփոփելով Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի հարաբերությունների ձևավորման և զարգացման փուլերը՝ հարկ է նշել, որ 1997 թվականից մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք հարկվում են նույն ձևով, բացի Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանձին դրույթների:

Հարկային հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ վավերացված միջազգային պայմանագրով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով, պետական, տեղական հարկերի և վճարների մասին ՀՀ օրենքներով, ինչպես նաև դրանց հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով: ՀՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորվում են նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Սնանկության մասին», «Հարկային ծառայության մասին» և այլ օրենսգրքերով:

ՀՀ-ում ձևավորված իրավական, տնտեսական և գործառնության կարգավորումները հիմք են տալիս ամրապնդելու հարկերի դերը և նշանակությունը տնտեսության կարգավորման և զարգացման հարցում:

Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են.

1. պետական հարկեր՝

- ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ),

- ակցիզային հարկը,
- շահութահարկը,
- եկամտային հարկը,
- բնապահպանական հարկը,
- ճանապարհային հարկը,
- շրջանառության հարկը:

2. տարածքային հարկեր`

- անշարժ գույքի հարկը,
- փոխադրամիջոցների գույքահարկը:¹

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը մինչև 2008թ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամը` 2004 թվականից հետ եղել է զսպողական:

Ըստ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի, **ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ)** անուղղակի հարկ է, որը սույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե` ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: ²

Հարկային համակարգի միջոցով պետությունն ազդում է արտադրության, դրա կառուցվածքի և զարգացման վրա: Հարկային քաղաքականության միջոցով պետությունը խթանում կամ սահմանափակում է գործարար ակտիվությունը, տնտեսական շրջանառության ծավալները, ներդրումային հնարավորությունները և այլն: Օրինակ` ԱՄՆ-ում երկար տարիներ ներմուծման հարկի բարձր մակարդակը պաշտպանում էր պողպատաձուլական ընկերություններին օտարերկրյա մրցակիցներից` խթանելով հայրենական արտադրողին, իսկ օրինակ ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքից գանձվող հարկերը սահմանվում են մարդկանց ծխելու և խմելու սովորություններից զերծ պահելու համար` ապա խրախուսելով անվիճելիորեն վնասակար գործողությունները:

Կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա մեծ ազդեցություն ունի ազգային տնտեսության իրավիճակը, որի տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, ըստ այդմ` ավելի մեծ հարկային եկամուտներ, և հակառակը` տնտեսական աճի ցածր մակարդակը հանգեցնում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկների:


Համաձայն 2016-2020 թվականների ՀՀ բյուջետային եկամուտների կառուցվածքային վերլուծության արդյունքների` պետական բյուջեի եկամտային մասի ձևավորման հիմնական աղբյուրը հարկային մուտքերն են, իսկ տուրքերը, պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների տեսակարար կշիռը ժա-

¹ ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՕ-165-Ն, հոդված 6 www.arlis.am

² Նույն տեղում, հոդված 292:

մանակի ընթացքում ունի նվազման միտում՝ պայմանավորված հարկային մուտքերի մասնաբաժնի աճման տեմպերով:

Հարկային մուտքերը պետական բյուջեում ամենաբարձրը գրանցվել են 2019 թվականին՝ 86.3%, կազմելով 1378.2 մլրդ դրամ, ամենացածրը՝ 2020 թվականին՝ 75.7%, կազմելով 1206.1 մլրդ դրամ (Գծապատկեր 1):




Գծապատկեր 1. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2016-2020 թթ.¹

Ընդհանուր առմամբ, կարելի է արձանագրել, որ 2016-2020 թվականների բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքում էական փոփոխություններ չեն նկատվել: Հատկանշական է նաև, որ 2020 թվականի վերջին ամիսներին նկատվել է պետական բյուջեի եկամուտների անկում, պայմանավորված դեկտեմբերին նախորդ տարվա նկատմամբ բյուջեի այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների աճով: Վերջինիս կազմում ներառվել է նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամից պետական բյուջե փոխանցված գումարները:

Հարկ է նշել, որ դիտարկված ժամանակահատվածներում ՀՀ պետական բյուջեի կառուցվածքում ուղղակի և անուղղակի հարկերի բաշխումը հավասարաչափ է (Գծապատկեր 2):

¹ Կառուցվել է հեղինակի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության հրապարակած տվյալների հիման վրա www.minfin.am/hy/page/hychart/




Գծապատկեր 2. Պետական բյուջեի կառուցվածքում ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը (մլրդ դրամ)¹

Հարկային մուտքերի ձևավորման գործում առանցքային է ավելացված՝ արժեքի հարկի դերը: Դիտարկված ժամանակահատվածում ԱԱՀ-ն ապահովել է ընդհանուր բյուջետային եկամուտների 37-41%-ը, եկամտային հարկը՝ 31-35%-ը, շահութահարկը՝ 11-17%-ը, ակցիզային հարկը՝ 6-10%-ը, շրջանառության հարկը՝ 1.6-2%-ը: 2016 թվականին ՀՀ պետական բյուջեի կառուցվածքում ԱԱՀ-ն ապահովել է 391.1 մլրդ դրամ, եկամտային հարկը՝ 33.2 մլրդ, շահութահարկը՝ 127.2 մլրդ, ակցիզային հարկը՝ 59.7 մլրդ դրամ, իսկ շրջանառության հարկը՝ 15.3 մլրդ դրամ: 2017 թվականին նախորդ տարվա համեմատ բոլոր հարկային եկամուտները աճել են, բացի շահութահարկից, որը կազմել է 110 մլրդ դրամ: ԱԱՀ-ն ապահովել է 408.8 մլրդ դրամ, եկամտային հարկը՝ 341.3 մլրդ, ակցիզային հարկը՝ 82.3 մլրդ, իսկ շրջանառության հարկը՝ 18.3 մլրդ դրամ: Դիտարկված բոլոր հարկային մուտքերը, 2018-2019 թվականների համեմատության մեջ, հարկային մուտքերի կառուցվածքում աճ են գրանցել: Մասնավորապես ԱԱՀ-ն 2018 թվականին ապահովել է 438.2 մլրդ դրամ, 2019 թվականին՝ 506.5 մլրդ դրամ, եկամտային հարկ 2018 թվականին՝ 356.6 մլրդ դրամ, 2019 թվականին՝ 440.8 մլրդ դրամ: Շահութահարկը 2018 թվականին կազմել է 170.1 մլրդ դրամ, 2019-ին՝ 233.8 մլրդ դրամ, իսկ ակցիզային հարկը 2018 թվականին՝ 109 մլրդ դրամ, 2019 թվականին՝ 138.6 մլրդ դրամ: Հարկային եկամուտների կառուցվածքում ամենաքիչ եկամուտ ապահոված շրջանառության հարկը 2018 թվականին կազմել է 21.3 մլրդ դրամ, 2019-ին՝ 31.6 մլրդ դրամ:

¹ Կառուցվել է հեղինակի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության հրապարակած տվյալների հիման վրա www.minfin.am/hy/page/hychart/

Վերլուծված բոլոր հարկատեսակների մուտքերը 2020 թվականին, նախորդ տարիների համեմատ, գրանցել են անկում՝ պայմանավորված պատերազմական և համավարակային իրավիճակով: Այսպես, ԱԱՀ-ն կազմել է 471.6 մլրդ դրամ, նախորդ տարվա համեմատ նվազելով 6.9%-ով, եկամտային հարկը՝ 411.5 մլրդ դրամ նախորդ տարվա համեմատ նվազելով 6.6%: Շահութահարկը 2020 թվականին կազմել է 148.38 մլրդ դրամ, արձանագրելով 36.3% անկում նախորդ տարվա համեմատ, իսկ ակցիզային հարկը՝ 123.6 մլրդ դրամ, արձանագրելով նախորդ տարվա համեմատ 10.9% անկում: Շրջանառության հարկը կազմելով 26.6 մլրդ դրամ, նախորդ տարվա համեմատ նվազել է 15.9%-ով (Գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Հարկային եկամուտների հարաբերակցությունը ՀՀ բյուջեի եկամուտների կառուցվածքում ըստ հարկատեսակների 2016-2020թթ. (մլրդ դրամ)¹

Շուկայական տնտեսություն ունեցող երկրներում հարկային բեռի մեծացումը նոր հարկատեսակների սահմանման ու ներդրման, հարկի դրույքաչափերի բարձրացման և հարկային արտոնությունների կրճատման միջոցով, մասնավորապես, հարկային բեռի ծանրությունն անուղղակի հարկերի վրա դնելով, սկզբնական շրջանում ապահովում է հարկային եկամուտների որոշակի բարձրացման ջանքեր: Մակայն հետագայում՝ երկարաժամկետ հատվածում, այդ դրական ցուցանիշներին հաջորդում է արտադրության ծավալների կտրուկ անկում,

¹ Կառուցվել է հեղինակի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության հրապարակած տվյալների հիման վրա www.minfin.am/hy/page/hychart/

առաջացնելով բյուջետային ծավալների կրճատում և հետևաբար սոցիալ-տնտեսական խնդիրներ, որը չի կարող չանդրադառնալ նաև գործարար միջավայրի վրա:

Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականից իրականացվում են ուղղակի հարկերի բեռի նվազեցում՝ ի հաշիվ անուղղակի հարկերի, որը ակնկալվում է, որ դրական կանդրադառնա գործարար միջավայրի ակտիվության վրա: Մասնավորապես 2020 թվականի հունվարի 1-ից՝

- իջեցվել է շահութահարկի դրույքաչափը,
- սահմանվել է եկամտային հարկի համահարթ դրույքաչափ, որը ունի աստիճանաբար նվազման միտում,
- օտարերկրացի ֆիզիկական անձանց շահաբաժինները հարկվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների շահաբաժինների հարկման միևնույն՝ ավելի ցածր 5 % դրույքաչափերով,
- ակցիզային հարկի դրույքաչափերը աստիճանաբար բարձրացվում են:

Ընդլայնվել է փոքր բիզնեսին արտոնյալ ռեժիմը: Նախկինում հարկերից ազատվում էր տարեկան մինչև 9 մլն դրամ շրջանառություն ունեցող միկրոբիզնեսը և մինչև 18 մլն շրջանառությամբ ընտանեկան բիզնեսը, իսկ 2020 թվականից միկրոբիզնեսը հարկ չի վճարում անկախ նրանից, թե այնտեղ ընտանիքի անդամներ, թե օտար մարդիկ են աշխատում: Իսկ չհարկվող շրջանառության շեմը բարձրացվել է մինչև 24 մլն դրամ, ինչից հետևում է, որ անհրաժեշտ կլինի աշխատողների աշխատավարձից եկամտահարկ վճարել:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը մտահոգիչ է, քանի որ այս պատկերը կարող է զսպել ամբողջական պահանջարկը, հանգեցնելով ապրանքների և ծառայությունների անհամեմատ բարձր գների սահմանման, որն էլ բացասաբար կազդի հասարակության բարեկեցության վրա:

Սովերային տնտեսության կրճատման և տնտեսվարող սուբյեկտներին դեպի ֆորմալ դաշտ բերելու նպատակով առաջարկվում է ուղղակի և անուղղակի հարկերի մասով կատարել բարեփոխումներ, մասնավորապես շահութահարկի 18% դրույքաչափի փոխարեն սահմանել 9% և 18% դրույքաչափեր, հաշվի առնելով տնտեսվարող սուբյեկտների շրջանառության ծավալները, փոփոխություններ կատարելով շահութահարկի մասին ՀՀ օրենքում: Առաջարկում ենք նաև չհարկվող շրջանառության հարկի շեմը բարձրացնել մինչև 30 մլն դրամ՝ տնտեսվարող սուբյեկտներին տալով արտոնություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ հարկային օրենսգիրք, ՀՕ-165-Ն, www.arlis.am: [HH harkayin o'rensgirq, HO'-165-N, www.arlis.am]
2. ՀՀ ֆինանսերի նախարարություն, www.minfin.am/hy/page/hychart/: [HH finanseri naxararowt'yown, www.minfin.am/hy/page/hychart/]

3. Брисгалин А., Налоги и налоговое право, Москва 1997, с. 54. [Brisgalin A., Nalogi i nalogovoe pravo, Moskva 1997, s. 54]
4. Макаркина, Н. Л. Налоговая нагрузка / Н.Л. Макаркина. – Москва: Юрайт, 2013. – 207 с. [Makarkina, N. L. Nalogovaja nagruzka / N.L. Makarkina. – Moskva: Jurajt, 2013. – 207 s]

ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՔՐԻՍՏԻՆԵ ՅՈՒՐԵՎՆԱ ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Համառոտագիր: Հոդվածում վերլուծվել են ուղղակի և անուղղակի հարկերի արդյունավետ հարաբերակցության մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում: Ըստ էության, ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը մտահոգիչ է, քանի որ 2006-2020թթ. ժամանակահատվածում ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցության պատկերը կարող է զսպել ամբողջական պահանջարկը՝ հանգեցնելով ապրանքների և ծառայությունների անհամեմատ բարձր գների սահմանման, ինչն էլ բացասաբար ազդեցություն կունենա հասարակության բարեկեցության վրա:

Գիտական նորույթ: Ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը մտահոգիչ է ՀՀ-ում, քանի որ անուղղակի հարկերի գերակշռումը ուղղակի հարկերի նկատմամբ ցույց է տալիս հարկային վարչարարության ցածր մակարդակն ու սովետային տնտեսության ծավալները: Այս պատկերը կարող է զսպել ամբողջական պահանջարկը՝ հանգեցնելով ապրանքների և ծառայությունների անհամեմատ բարձր գների սահմանման, որն էլ բացասաբար կազդի հասարակության բարեկեցության վրա:

Բանալի բառեր: Հարկային համակարգ, հարկային բեռ, հարկային քաղաքականություն, բյուջետային եկամուտներ, ուղղակի հարկեր, անուղղակի հարկեր, հարկային արտոնություն:

МЕХАНИЗМЫ ЭФФЕКТИВНОГО ВЗАИМООТНОШЕНИЯ ПРЯМЫХ И КОСВЕННЫХ НАЛОГОВ В РА

КРИСТИНА ЮРЬЕВНА БАГДАСАРЯН

Кандидат экономических наук, доцент

Аннотация. В статье анализируются механизмы эффективного соотношения прямых и косвенных налогов в Республике Армения. На самом деле, соотношение прямых и косвенных налогов вызывает беспокойство, и картина соотношения

прямых и косвенных налогов в течение 2006-2020 г. периода может ограничить полный спрос, что приведет к несравненно более высоким ценам на товары и услуги, что окажет негативное влияние на общественное благосостояние.

Научная новизна. Соотношение прямых и косвенных налогов вызывает беспокойство в Армении, поскольку преобладание косвенных налогов над прямыми налогами свидетельствует о низком уровне налогового администрирования и размерах теневой экономики. Такая картина может сдерживать общий спрос, приводя к несравненно высоким ценам на товары и услуги, что негативно скажется на благосостоянии общества.

Ключевые слова. Налоговая система, налоговая нагрузка, налоговая политика, доходы бюджета, прямые налоги, косвенные налоги, налоговые льготы.

MECHANISMS OF EFFECTIVE CORRELATION OF THE DIRECT AND INDIRECT TAXES IN THE RA

CHRISTINA BAGHDASARYAN

Ph.D. in Economics, Associate Professor

Annotation. The article analyzes the mechanisms of effective ratio of direct and indirect taxes in the Republic of Armenia. In fact, the ratio of direct to indirect taxes is worrying, as the picture of the ratio of direct to indirect taxes can restrain the full demand during the period of 2006-2020, leading to incomparably higher prices for goods and services, which will have a negative impact on public welfare.

Scientific novelty. The ratio of direct to indirect taxes is worrying in Armenia, as the predominance of indirect taxes over direct taxes shows the low level of tax administration and the size of the shadow economy. This picture can curb the aggregate demand, leading to incomparably high prices for goods and services, which will have a negative impact on public welfare.

Keywords. Tax system, tax burden, tax policy, budget revenues, direct taxes, indirect taxes, tax privilege.